ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ՝
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ 063 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ԿԱՐԾԻՔ

Մանե Վովայի Խաչատրյանի՝ «Մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Մանե Վովայի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ժամանակակից աշխարհում կարևորագույն նշանակություն ունեցող թեմաներից մեկին՝ մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության հետ կապված արդիական և հրատապ հիմնախնդիրներին:

Մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը գտնվում է ժամանակակից իրավաբանական գիտության ուսումնասիրման կիզակետում և մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանությունը ևս բացառություն չէ. ավելին՝ այս ինստիտուտն իրապես ունի թե՛ համապարփակ և համալիր հետազոտման, թե՛ հատկապես հետագա կատարելագործման և արդյունավետության բարձրացման կարիք: Մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանությունը հանդիսանում է իրավունքների պաշտպանության համեմատաբար երիտասարդ, սակայն զարգացող և հեռանկարային ինստիտուտներից մեկը, որի նկատմամբ անդադար աճում է ինչպես գիտական, այնպես էլ հասարակական և քաղաքական հետաքրքրությունը: Վերը նշվածը վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետությանը, որտեղ մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության ինստիտուտի հետազոտման հարցում կան էական բացեր, որոնց տեսական իմաստավորումը կարող է նպաստել առկա խնդիրների գործնական լուծմանը:

Սույն ատենախոսական աշխատանքի ուսումնասիրության արդյունքներով կարելի է փաստել, որ այն իրենից ներկայացնում է ամփոփ և ամբողջական գիտական հետազոտություն, որում հեղինակի կողմից արվել են գիտական վերլուծության և հետագա հանրային քննարկման կարիք ունեցող բարդ հարցադրումներ, լուսաբանվել են առաջնային լուծում ակնկալող մի շարք հիմնահարցեր, ինչպես նաև դրանց շուրջ առաջադրվել են նոր մոտեցումներ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը հեղինակին հնարավորություն է ընձեռել կանխորոշել հետազոտման նպատակը, այն է՝ մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության ինստիտուտի կատարելագործման

գործընթացի վրա ազդող բազմաբնույթ գործոնների համակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, վարչարարության և վարչական դատավարության ոլորտում արդեն իսկ առկա հիմնախնդիրների առնչությամբ իրավական, սոցիալական և քաղաքական բարեփոխումների ուղղությամբ առաջարկությունների մշակումը, ինչպես նաև մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության առավել կատարելագործված, գործուն և իրավակիրառ կառուցակարգի մշակումը: Ատենախոսության թեմայի հետազոտման նպատակի իրագործման համատեքստում հեղինակի կողմից առաջադրվել են թվով վեց խնդիրներ, որոնց տրվել են հիմնավոր պատասխաններ:

Ըստ այդմ, հետազոտության նպատակն ու խնդիրները ներկայացված են հնարավորինս հստակ, իսկ աշխատանքում արված հետևություններն ու առաջարկությունները գերազանցապես հիմնված են օգտագործված տեսական և նորմատիվ նյութերի վերլուծության ու անձնական դատողությունների վրա: Ընդ որում, աշխատանքն ունի անհրաժեշտ աղբյուրագիտական հիմք, հեղինակը բավարար չափով օգտվել է թե՛ հայրենական, թե՛ արտասահմանյան տեսական աղբյուրներից, իրավական փաստաթղթերից և գործնական այլ նյութերից, որոնք էապես հարստացրել են ատենախոսության բովանդակությունը:

Պաշտպանության ներկայացված թեկնածուական ատենախոսությունը վարչական իրավունքի գիտության ոլորտում մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության ինստիտուտի կատարելագործմանն ուղղված հաջողված համակարգային փորձ է, որում քննարկված հարցերն այս կամ այն չափով արտացոլում են ստացել տարբեր գիտնականների աշխատություններում: Սակայն թեև հետազոտության առարկայի հետ կապված որոշ հարցեր հանդիսացել են ինչպես տեսաբանների, այնպես էլ պրակտիկ աշխատողների ուսումնասիրությունների առարկա, այնուհանդերձ, ներկայումս սույն թեման դեռևս շարունակում է մնալ հետաքրքրական, արդիական, նաև՝ որոշ առումներով խնդրահարույց:

Սույն ատենախոսության գիտական նորույթը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան երկրներում առկա փորձի հիման վրա մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության տեսական և գործնական կառուցակարգի սկզբունքորեն նոր միասնական մոտեցումների մշակումն է: Ըստ այդմ, աշխատանքի գիտական նորույթը, մասնավորապես, արտահայտվել է նրանում, որ առաջին անգամ կատարվել է մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության ձևերի և միջոցների համալիր վերլուծություն, տարանջատվել են վարչաիրավական պաշտպանության ձևերը վարչաիրավական պաշտպանության միջոցներից, տրվել է «պաշտպանության ձև» և «պաշտպանության միջոց» եզրույթների բնորոշումը, համակարգված ներկայացվել են մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության ձևերը, միջոցները, իրականացվել է հանրային հարաբերությունների ոլորտը կարգավորող

արտասահմանյան որոշ երկրների օրենսդրական ակտերի ուսումնասիրություն և իրավահամեմատական վերլուծություն՝ ընդգծելով դրանցում տեղ գտած այն դրույթները, որոնք առավել նպատակահարմար է կիրառել հայրենական վարչարարության և վարչական վարույթի պրակտիկայում:

Ատենախոսության բովանդակության անմիջական արտացոլումն են հանդիսանում պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնք ինքնատիպ, գիտականորեն հիմնավորված և տրամաբանորեն փաստարկված լինելով հանդերձ, նաև շարադրված են հակիրճ և բավարար հստակությամբ, ներկայացնում են աշխատանքում արված բովանդակային հիմնական շեշտադրումները: Պաշտպանության ներկայացվող թվով յոթ դրույթներով հիմնավորված է հետազոտության թե՛ գիտականությունը, թե՛ նորույթը:

Անդրադառնալով ատենախոսության կառուցվածքին՝ հարկ է, մասնավորապես, նկատել, որ ընտրված է աշխատանքի ողջամիտ կառուցվածք և ծավալ: Աշխատանքը շարադրված է լեզվական բոլոր կանոնների պահպանմամբ, պատրաստված և կազմված է ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան: Ընդ որում, ատենախոսության կառուցվածքը (ներածություն, երեք գլուխ՝ դրանցում ընդգրկված թվով 11 ենթագլուխներով, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ և հավելված) հնարավորություն է տվել բավարար մակարդակով ներկայացնել թեմային վերաբերող հրատապ հարցադրումներն ու արդիական հիմնախնդիրները:

Սույն ատենախոսական հետազոտության տեսական և գործնական նշանակությունը խիստ անհրաժեշտություն է վարչական իրավունքի գիտության հետագա զարգացման և կատարելագործման համար: Այնուհանդերձ, հարկ է փաստել, որ աշխատանքի առնչությամբ առկա են նաև որոշ նկատառումներ և (կամ) դիտարկումներ, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

1. Հեղինակի կողմից ատենախոսության ներածությունում որպես մեթոդաբանական հիմք, ի թիվս այլնի, նշված է նաև պատմական մեթոդը, որի գործածումն աշխատանքի բովանդակության մեջ ևս անվիճելի է: Մասնավորապես, ատենախոսության առաջին գլխի՝ «Մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության ինստիտուտի ծագումն ու ձևավորումը» վերտառությամբ ենթագլխում մանրամասնորեն ներկայացված է Հայաստանում այդ ինստիտուտի ծագման և ձևավորման պատմությունը: Սակայն նշված ենթագլխում վարչաիրավական պաշտպանության ինստիտուտի ձևավորման և կայացման ընթացքի արտասահմանյան փորձին հեղինակի կողմից արված պատմական անդրադարձը շատ հակիրճ է, ընդհանրական կերպով ներկայացված են որոշ օտարերկրյա հեղինակների կարծիքներ և մոտեցումներ, իսկ աշխատանքի այլ մասերում, օրինակ՝ երկրորդ գլխի երրորդ ենթագլխում և երրորդ գլխի երկրորդ ենթագլխում ներկայացված են քննարկման առարկա հարցերի առնչությամբ մի շարք երկրներում ներկա պահին գործող իրավակարգավորումները՝ առանց

պատմական ակնարկի: Չնայած այն հանգամանքին, որ աշխատանքը վերնագրված է «Մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում», այնուամենայնիվ, կարծում եմ, որ գիտական աշխատանքի լրիվության սկզբունքից ելնելով՝ նմանաբովանդակ աշխատանքի շրջանակներում հարկ էր պատմաիրավական և պատմահամեմատական մեթոդների առավելագույնս արդյունավետ կիրառմամբ հնարավորինս լիարժեքորեն ուսումնասիրել նաև քննարկման առարկա ինստիտուտի ծագման և ձևավորման պատմական ողջ ընթացքը աշխարհի մի շարք այլ երկրներում ևս կամ առնվազն ԱՊՀ և (կամ) եվրոպական տարածաշրջանի մի քանի երկրում, ինչը կարող էր, մի կողմից, առավել արժեքավոր դարձնել սույն գիտական աշխատանքի տեսական նշանակությունը և, մյուս կողմից, բարձրացնել դրա գործնական կիրառելիության հնարավորությունները նաև մեր պետության սահմաններից դուրս:

2. Ատենախոսության շրջանակներում պաշտպանության ներկայացված դրույթներում առկա են ձևակերպումներ, որոնք ենթադրում են հեղինակի կողմից աշխատանքում և հատկապես դրա եզրակացության մեջ ոչ միայն տեսական վերլուծությունների և հայեցակարգային բնույթի եզրահանգումների ներկայացում, այլ նաև մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության մեխանիզմների շուրջ արված ուսումնասիրության արդյունքներով գործող իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված գործնական կոնկրետ առաջարկությունների շարադրում և հիմնավորում: Հեղինակի կողմից այդօրինակ առաջարկություններ ձևակերպված են աշխատանքի բովանդակության մեջ, ինչպես նաև սխեմատիկ ներկայացված են ատենախոսության վերջնամասում՝ «Առաջարկվող օրենսդրական փոփոխությունները» անվանումը կրող Հավելված 1-ի տեսքով: Սակայն, կարծում եմ, որ աշխատանքում կատարված համապատասխան ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքների հիման վրա ձևավորված՝ գործող օրենսդրության բարելավմանն ուղղված կոնկրետ գործնական առաջարկություններն անպայմանորեն պետք է զետեղվեին աշխատանքի «Եզրակացություն» վերտառությունը կրող բաժնում և հնարավորության դեպքում պետք է ներառեին նաև համապատասխան իրավական ակտում հեղինակի գնահատմամբ անհրաժեշտ փոփոխությունների և (կամ) լրացումների թե՛ ընդհանուր հայեցակարգը, թե՛ հնարավորինս հստակ ձևակերպված տեքստային բովանդակությունը, թե՛ դրանց շուրջ աշխատանքում բերված հիմնավորումները:

3. Աշխատանքն ամբողջությամբ, այդ թվում նաև՝ օգտագործված գրականության ցանկը, ինչպես արդեն նշվել է, հիմնականում ձևակերպված են սահմանված կանոններին և խմբագրական պահանջներին համապատասխան, սակայն, այնուհանդերձ, գրականության ցանկում առկա են որոշ բացթողումներ, մասնավորապես՝ մի քանի աղբյուրներ լիարժեք չեն ներկայացված, օրինակ՝ վկայակոչված ատենախոսությունների և սեղմագրերի պարագայում (190-191 էջեր)

նշված չէ դրանց էջերի քանակը: Միաժամանակ օգտագործված գրականության ցանկի՝ «Նորմատիվ իրավական ակտեր» և «Էլեկտրոնային աղբյուրներ» անվանումները կրող ենթաբաժիններում (էջեր՝ 174-179 և 194)՝ ակտերի անվանումները և կայքէջերը հիմնականում թվարկված են ոչ այբբենական հաջորդականությամբ:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է շեշտել, որ ատենախոսությունը պատրաստված է գիտական պատշաճ մակարդակով, իսկ վերը շարադրված նկատառումներն ու դիտարկումները կրում են մասնակի բնույթ, ենթակա են լրացուցիչ քննարկման և որևէ կերպ չեն կարող նսեմացնել գիտական աշխատանքի ընդհանուր դրական արժեքը:

Սեղմագրի բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, իսկ ատենախոսության հիմնական դրույթները բավարար չափով արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում:

Այսպիսով, Մանե Վովայի Խաչատրյանի՝ «Մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունն ամփոփ և ավարտուն գիտական հետազոտություն է, համապատասխանում է նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին, կատարված է բարեխղճորեն և բարձր մակարդակով, ունի գիտագործնական մեծ նշանակություն, ուստի, գտնում եմ, որ ատենախոսության հեղինակ Մ.Վ.Խաչատրյանն արժանի է ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի
ծագում ունեցող գույքի բռնագանձման
գործերով վարչության ավագ դատախազ,
Հայ-Ռուսական համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների
թեկնածու՝

Ա.Գ.Սարգսյան

Ա.Գ.Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար, բ.գ.թ.՝

Ռ.Ս. Կասաբաբովա

12-ը հոկտեմբերի 2020թ.